

ուխտագնացութեան եւ հոն ճգնողական կեանք վարելուն առ-
թիւ, ներքոյ զրեալ տեղեկութիւնները կը քաղենք ՊԶԸ (=1439)
թուական ձեռագիր Յայտնադրէ մը: Լուսաւորիչի Երուսաղէմ
այցելութեան առթիւ կը պատմուի. «Բնակեցաւ ի լեռն Սեպուհ,
որ եւ այժմ կոչի սուրբ Գրիգորի, ուստի եւ ասին կամեցաւ գնալ
ի վերայ ծնգաց յԵրուսաղէմ... եւ այնպէս իջեալ ի լեռնէն
եւ անցեալ ի ձորակ մի, առաքէ տէրն նորա Քրիստոս, ք. Սե-
րովբէս... եւ ի տեղւոյն խաչս կանգնեաց եւ Սերովբէս անուա-
նեաց եւ այժմ գեղակ է տեղին որ խաչքըն կան հրաշա-
գործք, եւ անուն գեղջն կոչի Սերովբիս:»... «Ասին դարձ-
եալ թէ՛ երկու ինքնակալքն... եկին ի Հոսովմայ յԵրուսաղէմ,
եւ վիճակաւ բաժանեցին զտնաւորինական տեղիան, եւ Հայոց
անկաւ սնարքն՝ Ս. Գողգոթան եւ Ս. Կարապետն՝ եւ Սուրբ
Յակոբն՝ եւ Սուրբ Գրիգոր կանթեղ կախեաց ի սնարան. եւ խոն-
դրեաց զիջումն լուսոյն յԱստուծոյ... եւ յաղագս այնորիկ լու-
սաւորիչ կոչեցաւ...» (Տաշ. Յուգ. էջ 47):

Երուսաղէմացի Յովհաննէս եպոս. (Հաննէ) պատմագիրն ալ
կը յիշէ հետեւեալ աւանդութիւններն թէ՛ Լուսաւորիչ երես ի քաղ
եւ ի վերայ ծնկաց ոսնախյոյ ընթացմանը այցելած է Երուսաղէմ.
Ժամանակ մը ճգնողական վարուք կը մնայ Ս. Յարութեան Խաչ-
գիւտի եկեղեցին, որ իր անուամբ Ս. Լուսաւորիչ կոչուած է.
եօթը տարի հոն ճգնելէ յետոյ, Զատիկի մը աւագ շաբաթ օրը,
հրագալուցին, Քրիստոսի գերեզմանը կը մտնէ, որ ժամանակ
ի պատիւ անոր կը վառին գերեզմանի բոլոր կանթեղներն եւ
Ս. Լուսաւորիչ այդ առթիւ կ'երգէ կերակամտին Լոյս գոարքը.
(Հաննէ. էջ 179). Ս. Գերեզմանի արտաքին զրան Հայոց պատ-
կերին քով կախուած կանթեղը կը կոչուի անուամբ Ս. Լուսաւոր-
իչի:

ԳՐԻԳՈՐ ԽԱՂԱԹԵԱՆՅ, ԱՂԵՔՍԱՆԴՐՍԱՊՈՂՅԻ. — Ծ. 1858ին.
Ուսուցչապետ Լազարեան ձեռնարակի՝ Մոսկուայի մէջ, իր գրական
եւ բանասիրական գործունէութիւնը սկսած է 1877ին. հրատարա-
կած է այլ եւ այլ պատմական եւ բանասիրական երկասիրութիւն-
ներ. 1910ին այցելած է Ս. Յակոբի վանքը ձեռագիրներու ու-
սումնասիրութեան համար: Վախճանած է 1912 փետր. 8ին,
Տփլիսի մէջ: